Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«10» դեկտեմբերի 2021թ. ք. Երևան

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը՝ ի դեմս նախագահ Գեղամ Գևորգյանի, և Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը՝ ի դեմս նախագահ Գևորգ Գրիգորյանի (այսուհետ միասին՝ Կողմեր),

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության միջև սերտ փոխգործակցությունը և տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության իրականացման դերը շուկայական տնտեսության արդյունավետ զարգացման և խթանման գործում,

արժևորելով բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման անհրաժեշտությունը, ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանումն ու խրախուսումը, հակամրցակցային գործունեության կանխարգելումը, սահմանափակումը, և տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը,

ինչպես նաև *կարևորելով* մրցակցության պաշտպանության քաղաքականության իրականացման հարցերում Կողմերի միջև համագործակցության ամրապնդումը

կնքեցին սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

Հոդված 1. Հուշագրի նպատակը

1.1 Հուշագրի նպատակն է սահմանել Կողմերի միջև համագործակցության ուղղությունները, ինչպես նաև կանոնակարգել դրա պայմանները և եղանակները:

Հոդված 2. Համագործակցության ուղղությունները և եղանակները

2.1. Կողմերը համագործակցում են հետևյալ ուղղություններով և եղանակներով՝

2.1.1 մրցակցային քաղաքականության իրականացման բնագավառում փորձի փոխանակում.

2.1.2 ոլորտային ուսումնասիրությունների, վարույթների իրականացման, և Կողմերի՝ օրենքով սահմանված լիազորությունից բխող այլ գործողությունների իրականացման հարցում օժանդակության ցուցաբերում.

2.1.3 վարույթների և ոլորտային ուսումնասիրությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում՝ հաշվի առնելով օրենսդրական կարգավորումներով սահմանված առանձնահատկությունները.

2.1.4 տնտեսական մրցակցության քաղաքականության զարգացմանը նպաստող միջազգային իրավասու կառույցներին անդամակցության, միջազգային իրավահարաբերություններին մասնակցության հարցերում աջակցություն.

2.1.5 մրցակցության կանոնների խթանման նպատակով կազմակերպվող համաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումներին մասնակցություն և դրա ապահովում, մասնագիտական-ուսումնական և այլ այցերի, կլոր սեղան քննարկումների, համագումարների, գիտաժողովների, սեմինարների, փորձի փոխանակմանն ուղղված այլ միջոցառումների կազմակերպում և անցկացում.

2.1.6 մրցակցությանն առնչվող իրավական ակտերի մշակման հարցերում օժանդակություն.

2.1.7 գիտական նյութերի, գրականության, կողմերի հետաքրքրությունների շրջանակն ընդգրկող գործնական փորձով փոխանակվելու հնարավորություն.

2.1.8 Հուշագրով սահմանված համագործակցության իրավական և կազմակերպչական ուղղությունների շրջանակներում անհրաժեշտ այլ տեղեկատվության տրամադրում և (կամ) փոխանակում և (կամ) գործողությունների իրականացում.

2.1.9 Կողմերի ձեռքբերումների, գործունեության արդյունքների լուսաբանման նպատակով համատեղ միջոցառումների իրականացում.

2.1.10 Կողմերի միջև շարունակական համագործակցության ապահովման անհրաժեշտ նախադրյալների ստեղծում, համագործակցության զարգացման ուղիների նախանշում և դրանց իրականացում:

Հոդված 3. Պատասխանատու ներկայացուցիչներ

3.1 Հուշագրով նախատեսված համագործակցության արդյունավետ իրականացման նպատակով Կողմերը նշանակում են պատասխանատու ներկայացուցիչներ:

3.2 Պատասխանատու ներկայացուցիչները համակարգում են Կողմերի հաղորդակցությունները, կազմակերպում են համատեղ աշխատանքային հանդիպումները, խորհրդակցությունները և փաստաթղթերի մշակումը:

Հոդված 4. Հուշագրում փոփոխությունների կատարումը

4.1 Հուշագրում փոփոխությունները կատարվում են փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Համապատասխան փոփոխությունները բովանդակող փաստաթղթերը կցվում են Հուշագրին և կազմում դրա բաղկացուցիչ մասը:

4.2 Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում Կողմերը կարող են համատեղ ծրագրերի իրականացման նպատակով կնքել լրացուցիչ համաձայնագրեր, որոնք չեն կարող հակասել Հուշագրին:

Հոդված 5. Եզրափակիչ և անցումային դրույթներ

5.1 Կողմերն ապահովում են ստացված տեղեկատվության գաղտնիության պահպանումը՝ համաձայն յուրաքանչյուր Կողմի երկրում գործող օրենսդրության

պահանջների: Կողմերը կարող են հրաժարվել համագործակցությունից՝ հաշվի առնելով առևտրային և այլ գաղտնիքի պաշտպանության ոլորտում գործող պահանջները:

5.2 Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5.3 Հուշագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնք մեկական օրինակով պահվում են Կողմերի մոտ:

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ	Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի նախագահ
ք. Երևան, Տիգրան Մեծի 4	ք. Ստեփանակերտ Փետրվարի 20-ի փողոց, 1 շենք
Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ _____	Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ _____